ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
Վ. ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

գ. Վ. Արտաշատ 17.12. 2012թ.

N 20 - Ն

2013Թ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ և ՎՃԱՐՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ

Ղեկավարվելով «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներով, ավագանին

ՈՐՈՇԵՑ – 2013թ-ի համար հաստատել տուրքերը և վճարները հետևյալ դրույքաչափերով

1. Հայաստանի Հանրապետության սահմանված կարգով հաստատված ճանապարհաշինարարական նախագծի համապատասխան նոր շենքերի, շինությունների (ներառյալ ոչ հիմնական շինարարության տեղադրման) թույլտվության համար, տեղական տուրքը սահմանվում է հիմնական օբյեկտի համար :

   ա) մինչև 300քմ ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում այգեգործական (ամառանոցային տների, ինչպես նաև 200քմ ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար 15000դ ):

   բ) սույն կետի ա) ենթակետով չնախատեսված օբյեկտների համար:

   բ ա) 201-ից մինչև 500քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 30000դրամ:

   բ բ) 501-ից 1000քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 70000 դրամ:

   Ոչ հիմնական շինությունների տեղադրման համար

   գ) մինչև 20քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 3000 դրամ

   դ) 20 և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 5000 դրամ

2. Համայնքի տարածքում սենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով չի նախատեսվում կցակառույցների,

վերնակառույցների, շենքերի գաբարիդային չափերը ընդլայնող կառույցների(այդ թվում ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն 3000դրամ:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինարարական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է 5000 դրամ :

Սույն հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ կետերի համար կիրառել 0.5 գործակիցը:

4. 1. Համայնքի տարածքում ոգելից խմիչքի թույլտվության համար հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառք կազմակերպելու դեպքում յուրաքանչյուր եռամսյակի համար 2000 դրամ:

2. Ծխածոտի արտադրանքի, վաճառքի թույլտվության համար հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառք կազմակերպելու դեպքում յուրաքանչյուր եռամսյակի համար 2000 դրամ:

5. Համայնքի տարածքում

ա) բացոթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրք սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար 350 դրամ:

բ) հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում վաճառքի թույլատվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 150000 (հարյուր հիսուն հազար) դրամ:

6. Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու համար տեղական տուրք սահմանել ընթացիկ տարվա համար 2000 դրամ:

7. Համայնքի տարածքում խաղատների, հանրային սննդի օբյեկտները, բաղնիքները, զվարճանքի օբյեկտները ժամը $24^{00}$-ից հետո աշխատելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է

ա) առևտրի օբյեկտների համար 25000 դրամ

բ) հանրային սննդի, զվարճանքի օբյեկտների համար 50000 դրամ

գ) բաղնիքների համար 200000 դրամ

դ) խաղատների համար 500000 դրամ

ե) շահումով խաղերի համար 250000 դրամ

զ) վիճակախաղերի կազմակերպում 100000 դրամ

8. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար 1քմ տեղական տուրքը սահմանվում է

է) այլ արտաքին գովազդի համար 1000 դրամ:

դատարկ գովազդային վահանակների համար 700 դրամ:

9. Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից սահմանել վճար՝ 3000 դրամ

10. Աղբահանության համար սահմանել տեղական տուրք յուրաքանչյուր բնակչի համար ամսեկան 10 դրամ:

Ավագանի՝

Գրիգոր Եսայանը

Գեղամ Սարգսյանը

Քաջիկ Վարդանյանը

Թորոս Սարգսյանը

Արարատ Միքայելյանը

Հակոբ Սահակյանը

Կարեն Ավետիսյանը

Վ. Արտաշատի գյուղապետ՝ Ա. Ղազարյան